



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԺԱ

ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՍ

(ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ)

ԳՐԵՑ

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԵՑ



ՄԱՐՍԵԼ

ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

MARSEILLE

IMPRIM. ET PAPETERIE DU MIDI, M. SCHICKLER

44, Allées de Meilhan, 44

1894

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ԺԱ

ԹՈՄՍԱ ԲՈՑԱՐԻՍ

(ՅՈՒՆԱԿԱՆ ՊՈՏՄՈՒԹԻՒՆԻՑ)

ԽՀՅԱՅ

ԳՐԵՑ

Վ. ԳԱԳԱՉԵԱՆՑ



ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱՐԱՆ Ա ՅՈՒՆԻԴԱՆԵԱՆԻ

MARSEILLE

IMPRIM. ET PAPETERIE DU MIDI, M. SCHICKLER
44, Allées de Meilhan, 44

1891

ԹՈՄԱՍ ԲՈՅԱՐԻՒ

(ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*)

Ա.

Սուխական Թիւրքիայի և Յունաստանի միջավայրումն է տարածվում յունական այն ծովը, որին Արշիպեղագոսի ծով են կոչում և նրա միջի հարիւրաւոր մանր կղզիներին էլ՝ Արշիպեղագոսի կղզիներ :

Տասնեւհինգերորդ դարում երբ Տաճիկները տիրել էին Յունաց կայսրութեան մեծ մասին և Սուլթան Մահմուտ Բ ը զօրեղ բանակ էր կազմում Բիւզանդիանն և Խլելու Յոյների ձեռքից, տաճիկ կառավարիչներ, ժողովուրդ, կադի և հազար տեսակ արիւնաբրու մահմետական ցեղեր մորեխի պէս ցրուել բռնել էին այդ կըդ-

(*) Յունական ժամանակակից պատմութիւնից քաղուած այս դէպքը առնուած և ընդարձակուած է մի յօդուածից, որը «Մ. Մինասիբեան» ստորագրութեամբ տպւել է 1861 թիւ 10 կուոնի ամսագրի մէջ։ Փաստերը ձգութեամբ պահպանուած են։

42188-60
29 2192

զիները , սկսած Նիմո կղղիից մինչեւ Կը-
րէտէն :

Դրանց թւումն էր նաեւ ամենափոք-
րիկ Սիրա կղղին , ուր կար մի բուռ յոյն
ժողովուրդ , ունէր մի փոքրիկ Հերմո-
պօլիս քաղաք և մի քանի խղճուկ գիւ-
ղեր , որոնք կպել քաղաքին , արուար-
ձանի կերպարանք էին ստացել :

Կղղին շատ էլ գեղեցիկ չէր . նրա մէջ
գտնւում էր բուսականութիւն , բայց
շատ քիչ , որովհետեւ հողը կաւային էր .
իսկ կաւային տեղում ծառ բուսցունելը
համարեա անհնար է :

Բնակիչները մեծ մասամբ ձկնորսու-
թիւնով էին զբաղվում . նրանց փոքրիկ
խրճիթները ցան ու ցրիւ ընկած էին ծո-
վափի վրայ , մէկը մի ժայռի ետեւում ,
միւսը երեսը դէպի ծովը , մի քանիսը
միմեանց ետեւից պարզվում էին երկու
կարգով մինչեւ քաղաքը և այդպիսով մի
փողոց եւս աւելացնում աղքատ քաղա-
քին մէջ :

Հէնց այդ փողոցի ծայրումը կար մի
ցած խրճիթ , բաղկացած մի սենեակից .
մինչ ամեն խրճիթից բարձրանում էր ծուխ ,
որովհետեւ կրակ էին վառել կերպուրի

համար , միայն այդ խրճիթն էր որ ծուխ
չէր արձակում և կարծես ամայի էր :

Առաւազաք գեռ նոր էր բացւել , ամեն
ոք տնից գուրս եկել գործի էր գնում ,
փողոցը կնդանութիւն էր ստացել , ան-
ցնում էին ձկնօրսներ , շտապում խա-
նութպանները , նաւավարները թիսկները
ուսերին դիմում էին դէպի իրենց նա-
ւակները որոնք ծփում էին ծովի ջրի վր-
բայ , կանայք տնից տուն էին մտնում և
Ծաճիկները այստեղից այնակից գուրս
էին ցցում իրենց փաթթոցաւոր գլուխ-
ները :

Այդ միջոցին դէպի անծուխ խրճիթն
էր քայլում մի երփառարդ քահանայ ,
որը ձեռքին թաշկինակով մի քառակու-
սի բան էր բռնել և մեզմ ձայնով երգե-
լով , իւր ձեռքն էր պարզում անցնող
բարեպաշտ քրիստոնեայներին . Ամեն ոք
կանդնում , վերցնում էր իւր կլոր գլու-
խարկը , մօտենում համբուրում էր պար-
զուած ձեռքը , իսկ շատերն էլ հետե-
ւում էին նրան :

Եւ այսպէս քահանան աղօթքներ մըր-
մընջալով , հինգ-վեց բարեպաշտ Յոյների
հետ մօտեցաւ գծուծ խրճիթին :

— Այստեղ է , չէ՞ , դարձաւ նա իրեն
հետեւողներից մէկին :

— Այո՛ , տէր հա՛յր , այդտեղ է , ա-
սացին նրան :

Քահանան գլուխը կռացրեց և ներս
մտաւ . ներս մտան նաեւ բոլոր նրան
հետեւողները :

Նրանց մտած սենեակը շատ փոքրիկ
էր , միջի կահ-կարասիքը խարխուլ և
մաշուած . մի անկիւնում դրուած կար
տախտակեայ մի թախտ , որի վրայ պառ-
կել էր մի հիւանդ կին . նրա երեսը կապ-
տել էր , նա հազիւ շնչում էր և բռպէ
առ բռպէ սպասում էր մահուան . քահա-
նան ձայնը բարձրացնելով քանդեց ձեռ-
քի առարկայի վրայից թաշկինակը , գըլ-
խարկը հանելով դրեց գետնի հողի վրայ
և մօտեցաւ մահակալին :

Առարկան մասնատուփ էր . առաւօտ-
եան շատոնց նրան եկեղեցում իմաց էին
տուել որ Բոցարիսի կինը հոգեւարքի մէջ
է և սպասում է վերջին օծման և ահա
քահանան եկել էր իր պարտքը կատարելու :

Ամենքը պատկառանօք գլխարկները
վերցրին , քահանան մօտ գնաց մեռնողին
և հարցրեց .

— Պատրաստ ես , կին , ընդունելու
վերջին օծումը :

Հիւանդը միգ գործեց , նախ բաց ա-
րեց աչքերը , յետոյ մեծ ջանքով և տան-
ջուելով բարձրացաւ , թիկն տուեց և
գոչեց .

— Որդի՛քս . . .

Ամենքը յուզուած՝ անկիւնի կողմը
դարձրին իրենց աչքերը : Այնտեղ անկիւ-
նում կծկուել պատին էին կպել երկու
մանուկներ . արտասուքը հոսելով ծած-
կում նրանց երեսները և ո՛չ մի քարա-
սիրտ չէր կարող դիմանալ տեսնելով այդ
երկու պատանիներին , որոնք մի քանի
րոպէից յետոյ բոլորովին որբ պիտի մը-
նային , որովհետեւ ծերունի Բոցարիսը
վաղուց մեռել էր :

Պատանիներից մէկը տասնեւհինգ տա-
րեկան էր , իսկ միւսը տասերեքքամեայ մի
սիրուն աղջիկ : Պատանին արտասուում
էր գառնութեամբ և կոտրտում ձեռնե-
րը . իսկ աղջիկը այնպիսի աղիողորմ խուլ
ճիչէր արձակում , որ քահանան ան-
գամ յուզուեց , ձեռքը աչքերին տարտէ
և միմոաց .

— Խեղճ էլինա՛ . . .

Էլէնան մունջ էր, նրա խուլ աղմուկ-ները, նրա ձիչերը յայտնում էին այդ. թշուառ աղջիկը, որ օժտուած էր մի յունական գրաւիչ գեղեցկութիւնով, ան-լեզու էր. լեզուի փոխարէն նրա վրայ կար դէմքը որ խօսում էր աւելի ճար-տար և պարզ քան կարող է մի լեզու : Այդ միջոցին Էլէնայի աչքերը մի այնպի-սի խոր, յուսահատ տիսրութիւն էին ար-տայայտում, որ աւելորդ կը լինէր նկա-րագրելով մեղմացնել նրան :

Պատանին, ծերտանի Բոցարիսի Թով-մաս որդին, թէեւ տասնեւհինգ տա-րեկան էր, բայց նրա վրայ նայողը կը կարծէր թէ նա շատ աւելի մեծ է : Եր-կարահասակ էր, լիքը դէմքով, թաւ-երկար սեւ մազերով, բոցափայլ աչքեր, լայն վեհ ճակատ : Երբ նա լալիս էր, նրա կրակոտ աչքերը կարծես փայլուն կայծեր էին արձակում :

Հիւանդը թիկն տուած, մի ակնարկ ձգեց նրանց վրայ . յետոյ չը կարողանա-լով երկար մնալ այդպէս, ձեռքով մօտ կանչեց նրանց և ընկաւ բարձին վրայ :

Երկու պատանիները վաղեցին ծունր դրին անկողնի առաջ, հիւանդը բաց ա-

րաւ ծանրացած արտեւանունքը, շար-ժեց շրթունքները, ձեռքը դանդաղու-թեամբ տարուբերեց ու ասաց.

— Թովմա՛ս, Էլէնա՛, այդտեղ էք :

— Այո՛, մայրիկ, թանկագին մայրիկ, գոչեց Թումասը դողդոջուն ձայնով :

— Խե՛զ որբեր, մրմնջաց հիւանդը և ամեն ոք նկատեց որ արցունքների մի քանի կաթիլներ դուրս բվլսելով աչքերից եկան գլորուելու թշերի վրայ : Նա բըու-նեց մանուկների ձեռքերը և դառնալով քահանային, ասաց.

— Տէր հա՛յր, ի՞նչ պիտի լինեն, սը-րանք :

— Որբերի տէրը Աստուած է, մայր Բոցարի՛ս, սատասխաննեց քահանան. նը-րա հաւատացեալները չեն թողնել սրանց անխնամ:

— Թովմասս աշխատում է, մրմնջեց հիւանդը, Թովմասս քաջ է . մի ամբողջ տարի նա էր որ ապրեցնում էր մեզ. բայց . . . ո՞վ կը լինի սրանց մայրը, ո՞վ կը լինի Էլէնայի պաշտպանը . . . հա՛յր, յարեց նա դառնութեամբ. զգում եմ որ չուտով ամեն ինչ վերջանալու է, կատարի՛ր օ-րէնքը :

Այն ժամանակ քահանան սկսեց կարդալ աղօթքներ, օծեց հիւանդին, յուզմամբ մի քանի մսիթարական խօսքեր ասաց և աչքերը սրբելով, շտապեց հեռանալ: Բոլորը հետեւեցին նրան:

Խրծիթում մնացին հիւանդը և նրա մօտ չոգած երկու որբերը:

— Թոմա՛ս, ասաց հոգեւարքը, բոլորի հեռանալուց յետոյ, մօտեցի՛ր որ լես մօրդ վերջին խնդիրը:

Թոմասը մօտեցաւ:

— Բայց նախ, ասաց մայրը, դուռը փակի՛ր. կարող է մի կեղտոտ Տաճիկ յանկարծ ներս մտնել և խառնել մեզ:

Թոմասը դուռը փակեց, յետոյ մօտեցաւ մահձին և արտասուքը աչքերում կանգնեց իւր սիրած մօր սնարի մօտ:

— Թոմա՛ս, ասաց կցկտուր կերպով մայրը. ես գիտեմ որ դու մօրդ շատ ես սիրում, նոյնպէս և այդ անբաղդ քրոջդ. բայց ահա մեռնելէս առաջ յանձնում եմ Էլէնային քեզ, Թոմա՛ս. աշխարհքիս վրայ նա բացի քեզնից ոչ ոք չունի, նա անբաղդ է. որդի՛ս, խօսք առուր ինձ որ նրան անտէր չես թողնելու:

— Ե՞ս անտէր թողնեմ նրան, մայրի՛կ,

գոչեց Թոմասը. ահա երդվում եմ որ միայն մահը կը բաժանի ինձ նրանից:

Հիւանդը յուզուած, մօտ քաշեց պատանուն և գրկեց նորան ու սեղմեց կրծքի վրայ. յետոյ տեսնելով Էլէնային, բռնեց նրա ձեռքից եւս, մօտ քաշեց, իրեն սիրելի այդ գլուխները առաւ կուրծքին վրայ, արտասուրեց և ասաց.

— Ես այժմ կը մեռնեմ բաղդատոր... Աստուած օրհնէ ձեզ, իմ հրեշտակներ...:

Յանկարծ լսուեցաւ դուան ձայնը. Խրծիթի խարխուլ դռան վրայ տեղում էին այնպէս ուժգին հարուածներ որ շարժվում էր ամբողջ սենեալը:

Հիւանդը թողեց գրկից իւր որդւոց:

— Նայիր ո՞վ է, Թոմա՛ս, ասաց նա այս անդամ այլ եւս բոլորովին մեռնողի ձայնով:

Թոմաս դունաթափւեց. իսկ դուռը այնպէս դղրդում էր որ Էլէնան անդամ լսեց և զարմացած նայում էր եղբօրը ու դռան:

— Բացէ՛ք, գեավուրնե՛ր, լսուեց մի կատաղի ձայն. բացէ՛ք թէ չէ ամբողջ տունը կը փցնենք ձեր գլխին...:

— Ոիւրքեր են, մրմռաց Թոմասը և դուռը բաց արեց:

Ներս խուժեցին մի քանի փաթթուցաւոր թիւրքեր, յանդգնութեամբ դէն հրեցին իրենց դէմը փակող Թոմասին և մէկը նրանցից գոչեց.

— Ո՞ւր է տանաէրը,
— Ի՞նչ էք ուզում, հարցրեց Թոմասը:
— Տանտէրը ո՞ւր է, որոտաց Թիւրքը բարկացած :

— Հայրս մեռել է, ես եմ տանտէրը.
— Ա՛, ծիծաղեց մի ուրիշը. այդ մո՞ւկն է եղել... բայց մեզ ի՞նչ, փաշան տուրք է պահանջում և մուկ էլ լինես, պիտի տաս :

— Այո՛, փոքրի՛կ, ծիծաղեց նրա երեսին մի ուրիշը. աքչա՛, աքչա՛(1) ... բա՛ց տոպլակդ տեսնենք...

Թոմասը գունաթափւեց. իսկ հիւանդը որ ամեն ինչ լսեց, ձիգ գործեց նորէն բարձրանալու և մի խոպոտ ձայն արձակեց :

— Ա՛, ասաց մի Թիւրք. այնտեղ մէկը կայ պառկած, ո՞վ է նա, գետուրի՛կ :

— Մայրս է, թոթովեց Թոմասը. մեռնում է :

— Ա՛, մեռնո՞ւմ է, աւելի լաւ, ծիծա-

ղեց մի ուրիշը. մի գեավուր էլ կը պահանձի այս երկրից... դէ՛հ, չու՛տ, տուրփողը գնանք, ես չեմ սիրում մեռնողիւսու շատ կենալ:

— Մէնք փող չունենք, կմկմաց Թոմասը. մայրս երկար հիւանդ մնաց, էլ փող չունենք :

— Չունի՞ր, որոտաց Թիւրքը. այն ժամանակ մենք ձեր խրճիթի մէջ ինչ որ կայ գուրս կը տանք. դէ՛հ, տղե՛րք, դարձաւ նա իւր ընկերներին. այս տասերբորդի խրճիթը կը լինի, դատարկեցէ՛ք... Փօ՛հ, ի՞նչ անձունի բաներ կան... ըլ մոռանաք այդ մեռնողի անկողինն էլ...

Եւ Թիւրքերը սկսեցին դէպի գուրս չպրտել աթոռները, պղինձներն ու ամանները. մէկը մօտեցաւ հիւանդին և բռնեց նրա տակը ձգւած անկողինը :

— Խղճացէ՛ք, գոռաց Թոմասը բռնելով նրա թեւը. թողէք մօրս հանգիստ մեռնելու :

— Ո՛, ծիծաղեց Թիւրքը. սպասե՞նք մինչեւ շան սատկելը... մենք առանց էն էլ գեռ շատ գործ ունենք, հեռու...

Եւ կոստութեամբ մի կողմ գլորելով մեռնողին, գուրս քաշեց նրա տակից անկողինը :

(1) Փո՛ղ, փո՛ղ :

Թումասը դողաց բարկութիւնից, նրա
աչքերը փայլեցին, շրթունքները արիւ-
նելու չափ կծեց նա:

Յանկարծ նրա աչքը ընկառ իւր քրոջ
վրայ. խեղճ էլինան վախից կծկել էր
մօր գլխի կողմը և դողում էր. Թուրքե-
րից մէկը վաւաշոտ հայեացքով նրան նա-
յելով մօտենում էր և երբ իւր կեղտոս
ձեռքերը պարզեց շոյելու նրա քնքոյշ
գէմքը, Թումասը այլ եւս չկարողացա-
դիմանալ, վերցրեց գետին ընկած թիւ-
րից մէկը և կատաղութեամբ իջեցրեց իւր
քրոջը շոյող Թուրքի գլխին:

— Անօրէննե՛ր, գոռաց նա. բաւա-
կան չէ՞ որ մօրս չէք թողնում հանգիստ
մեռնելու և համարձակվո՞ւմ էլ էք քրոջս
դպչելու:

Թուրքերը առջած կանդ առին:

— Դուրս այդ լակոտին, դուրս, գո-
ռաց մի Թուրք:

Սկսեց մի սաստիկ կռիւ. Թումասի թի-
ակը արագութեամբ ընկնում էր Թուր-
քերի գլխին որոնք խսկոյն շրջապատեցին
պատանի յանդուզնին. մէկը բռնեց նրա
մէջքից, քաշէքաշ տարաւ գէպի դուռը
և երբ չպատում էր դուրս, լուեց մի սոս-

կալի ճիչ, մի քսամնեցուցիչ կողկողագին
աղաղակ . . . :

Հիւանդն էր որ աեսել էր այս բոլորը.
նա բարձրացաւ, սարսափած աչքերով
նայեց, ձեռքերը տարածեց, մի ճիչ ար-
ձակեց և երեսի վրայ ցած փուեց գետինը:

Մեռել էր: Այդ տեսարան պահ մը
ստիպեց Թուրքերին կանգ առնելու. նը-
րանք թողին Թումասին, շտապով ամեն ինչ
դուրս ձգեցին խրճիթից, ամենակատա-
զիներից մէկն էլ քաշեց գատարկ մնացած
անկողինը և ամեն ինչ թողնելով հեռա-
ցան արագութեամբ:

Թումասը ոտքի ելաւ. էլինան ուշա-
թափ ընկել էր մօր վրայ: Պատանին կա-
տաղի աշքերով նախ նայեց մօր գիտին,
իւր խեղճ քրոջ, յետոյ դարձաւ գէպի
հեռացող Թիւրքերը, սեղմեց բուռները,
կրծտեցրեց ատամները և եթէ այդ միջու-
ցին մէկը անցնէր արդտեղից, լաւ կը լէր
թէ ինչպէս Թումասը, տասնեւհինգ տա-
րեկան ձկնորս պատանին, գոռում էր
կատաղութեամբ.

— Վայ ձեզ, անօրէննե՛ր, վայ ձեզ,
որովհետեւ Թումասը ձեզնից հաշիւ պիտի
պահանջէ և խիստ, անգութ հաշիւ . . . :

Բ

Անցան օրեր, Բոցարիսը պահեց իւր խոստումը և այս անդամ՝ երիտասարդ ձկնորսի խրճիթում տիրուհի էր դարձել էլքնան: Քոյր և եղբայր այնքան սիրում էին միմեանց որ բոլոր կղզեցիք զմայլում էին: Ծովի եղբարքումը միշտ երերում էր Թոմասի նաւակը, որի մէջ նա նստած, գնում էր իւր թոռը ձգելու ջրի մէջ. յետոյ նաւակը լցնում էր ձկով և այդ պաշտրը նա ամեն որ քաղաք տանելով, կարողանում էր ո՛չ միայն իր և քրոջ հացը ձարել, այլ և իրենց դատարկ խրճիթը հետղեաէ լեցնել կարասիներով:

Երիտասարդ Թոմասը ո՛չ միայն սիրելի գարձաւ իր քրոջ որ մոտածում էր միայն իր եղբօր վրայ, այլ և բոլոր կղզեցիներին. Նա ճանաչւեց իրր լու նաւավար, քաջ և յանդուգն երիտասարդ, որին ոչ մի ջաճիկ չէր համարձակուել ծուռ աշքով նայելու, առանց ենթարկուելու Բոցարիսի հուժիու բազուկի ծանր հարուածներին:

Եւ քիչ չէր պատահում որ Բոցարիսը թափուն տեղերում ծեծկուաւմ էր մի իւր Տաճկի, շատ անգամ ընկղմում էր

Նրանց նաւակները և հեռուն կանգնած զուարձանում էր նրանց կրած արժանի տանջանքներով:

Համարձակ նա ոչինչ չէր անում որովհետեւ գիտէր որ իրեն կարող էին բըռնել, սպանել. իսկ էլքնան կը մնար անտէր և անխնամ:

Առ այժմ նա առիթը չէր փախցնում իւր վրէժը ծածուկ անկիւններում գործադրելուց:

Կղզեցիք յայտնապէս տեսնում էին որ Թոմասը մի բուռն ատելութիւն է զգում դէպի թուրքերը. Իրենք Յոյներն իսկ շատ նեղութիւններ էին կրում նրանց ձեռքից. Թուրքը իրում էր նրանց վերջին կողէկը, թալանում, գերփում, գջլում էր, յափշաակում և անպատճում էր և այդ բոլորից յետոյ կանգնում ծիծաղում էր Յոյների ցաւերին վրայ: Այնաեղ քաղաքի ամենալաւ շէնքին մէջ կալին նըստել վայելում էր կղզիի լու բերքերից, իւր հարէ մն էր լեցնում յունական գեղեցկուհիները, զինուած և պերճութեամբ անցնելով փողոցից՝ մտրակել էր աալիս իւեղձ ձկնորսներին... իսկ նրա վայրենի ծառայները իրաւունք էին համարում

ձեռք դպրունել ամեն բանի, վնասել ամենքին, խել և առեւանգել ու անպատիժ մնալ: Անլսելի էին մնում բողոքները, անարդար էին բոլոր գործերը և անիրաւութիւնը հասել էր իր ծայրագոյն կէտին:

Թումասը տեսնում էր այդ բոլորը, նորա գէմքը կնճռվում էր, նրա սիրաը ուսում, նա պատրաստ էր իւրաքանչիւր Թուրքի փորը թափել հանդիպելիս. բայց խեղճ կլինան, այդ սիրուն թշուառ աղջիկը, կապում էր նրա թեւերը:

Թումասը ամբողջ գիշեր որսում էր, իսկ առաւօտեան տանում էր իւր որսը քառ զաք. յետոյ ճաշին վերադառնալով նա գնում էր քրոջ հետը ծովեզերքի մի ծառի տակ հանգստանալու և այնտեղ երկու պատանիները մի առժամանակ վայելում էին անդորր կեանք:

— կլինա՛, յայտնում էր ձեռքերով Թումասը իւր քրոջ. անտանելի է մեր գըրութիւնը, լաւ է որ մեր մայրը չուտ մեռաւ և չը տեսաւ թէ Թուրքերը ինչե՛ր են անում:

— Ի՞նչ կայ, հարցնում էր աղջիկը նշաններով:

— Ի՞նչ սիրով լինի էլ, օրէ օր Թուրքերը աւելի լրանում են. կղզիի մէջ էլ յոյն աղջիկ կամ կին չի մնացել, կաղին և իւր ծառայների երամակը պղծում են ամեն ինչ, սկսած աներից մինչեւ մեր Ատամարները:

— Իսկ մեր Պալէօլօդ կայսրը:

— Նա՞, անաց դառնութեամբ Թումասը. նա այժմ զբաղուած է մայրաքաղաքով որովհետեւ Թուրքերը սպառնում են ոչնչացնել Ստամբոլը... չէ՛, Ստամբոլից այլ եւս ոչինչ օգնութիւն չենք կարող սպասել, այնտեղ ամեն ոք այժմ իւր կաշին է մտածում... մենք, մենք ինքներս պիտի վերջապէս մի բան անենք:

— Ի՞նչ, վախեցած հարցրեց կլինան:

— Շատ հեշտ է, խօսեց ձեռքերով և տաքութեամբ Թումասը. կղզին մէջ Յոյները աւելի շատ են քան Թուրքերը. մենք թէեւ զինք չունենք, բայց ունենք մեր թիակները և կացինները...

Եւ նա լոեց, երեւի մտածելով թէ շատ է յառաջ գնում:

— Թումաս, դրդեց նրան կլինան. ես վախենում եմ միայնակ տան մէջ մնալ:

— Մի՛ վախենալ, ապահովացրեց նը-

բան պատանին . Թուրքերը քիչ շատ վա-
խենում են ինձնից . միայն դուռը միշտ
փակած պահիր և աշխատիր այդ լրերի
աչքին չերեւալ :

Այն ժամանակ Էլբնան աշխուժով ըս-
կեց մի երկար պանտօմիմա . Թոմասը ու-
շադրութեամբ դիտում էր նրան և հե-
տով տեսէ գունաթափվում էր :

— Ի՞նչ , գոչեց նա . ճիշդ ես ասում :
— Այո՛ , այո՛ , պնդեց աղջիկը վախե-
ցած :

— Եւ քեզ տեսա՞ն :

— Այո՛ , մինչեւ իսկ մէկը կանգնեց և
մի ինչ որ բան փափսաց միւսի ականջին
ու ինձ ցոյց տուեց :

— Իսկ դո՞ւ :

— Ես փախայ ներս ու դուռը կող-
պեցի նիգով :

Թոմասը գլուխը խոնարհեցրեց , ա-
կամայ սկսեց գողալ . տիսուր մոտածու-
թիւններ պաշարեցին նրա միտքը :

— Էլբնա՛ , դարձաւ նա քրոջը . ես
քեզ վաղը մի սուր դաշոյն կը բերեմ , դու-
խո այդ գենքից չե՞ս վախենում :

Էլբնան ժպտեց :

— Այո՛ , յիշում եմ , ժպտեց սիրալիր

Թոմասը . Նիկոլայի դէ՞պքն ես պատմում .
դա ոչի՞նչ . լսեղմ նիկոլան սիրում է քեզ
և ուզում էր համբուրել քեզ , ուրիշ ոչի՞նչ :

Էլբնայի աչքերը բարկութիւնից բոր-
բոքուեցան . նա ձեռքը բարձրացնեց և
ցոյց տուաւ զարնելու ձեւ :

— Իրաւ է , ծիծաղեց Թոմասը . Եթ-
իօլան ինձ պատմեց . խեղճը շատ վայեն-
ցել էր քո տապարիցը . . . բայց սխոե՞ն ,
մեր տապարը ամեն անդամ տուը չլինի՞ն .
ինձ պէտք է լինում ծովի վրայ . նրա վի-
խարէն ես քեզ կը թողնեմ մի տար դա-
շոյն . . . և համարձակ , համարձակ խորի՞ր
նրա կրծքում ով որ կը յանդգնի քեզ
ձեռք դպցնել :

Էլբնան նորից ժպտեց , բայց գունատ ,
մեռելային ժպիտով :

Այսպէս Թոմասը հարկ համարեց գլու-
նել երկու դաշոյն , որոնցից մէկը քրոջը
տուաւ , իսկ միւսը թաքցրեց իւր հա-
գուստի տակ : Ով գիտէ , մտածեց նոր .
գուցէ ինձ եւս պէտք լինի ծակոտելու . . .

Այդ կերպով ամեն ինչ խաղաղ անց-
կացաւ մինչեւ մի տարի :

Մի օր առաւօտ Թոմասը ձուկի մեծ
պաշար ժողոված , տուն մտաւ , մի երկու

պատառ հաց կերաւ , համբուրեց քրոջը
և սրութալակած դէպի քաղաքի շուկան
գնաց :

Առաւաօտը դեռ նոր էր բացուել , փոք-
րիկ քաղաքի հրապարակները դեռ եւս
դաշտարկ էին , խանութներն էլ բոլորը
փակ :

— Այս ի՞նչ է , մտածեց Թումասը , ին-
չո՞ւ են փակ խանութները ,

Յետոյ յանկարծ յիշեց որ այդ օրը
յունական մի պազմա (1) էր :

— Ֆո՞ւհ , մտածեց նա . ձուկերս չը
պիտի ծախուին . ի՞նչ յիմարն եմ եղել ,
ինչո՞ւ երէկի չը մտածեցի որ այսօր տօն է :

Եւ ծոծրակը քորելով կանգ առաւ
սրճավաճառ Միխայէլի խանութին առջև :
Սրճատունը բաց էր . ներսում սրճավա-
ճառը զբաղուած էր մի մեծ աման ջուր-
տաքացնելով :

— Բարի լրսո , Միխայէլ , ասաց Թո-
ւմասը տոպրակը ուսից ցած դնելով խա-
նութին դրան առջեւ :

— Այս , այդ գո՞ւ ես , Թուման . բարի-
լրսո . այդ ի՞նչ է հետդ :

(1) Ժողովրդական տօն :

— Զուկ : Ալ բառաւ ունի այս մասը —
— Զուկ . գծուել ես , Ֆիծաղեց Միխ-
այէլը . քեզ ո՞վ ասեց մի այսպիսի օր
ձուկ բերես ծախուելու :

— Զէի յիշում որ տօն էր :
— Վահ , վահ , ասաց դառնութեամբ
Միխայէլը . ի՞նչ օրի ենք հասել , Տէ՛ր
Աստուած . մի Յոյն , մի ճշմարիտ Յոյն
մուանայ իր տօն օրերը . . . Աստուած
իմ , Աստուած իմ , ե՞րբ պիտի ազատ-
ուենք այս Թուրքերի ձեռքից . Թուրքե-
րի որ էլ ոչինչ չը թողին մեզ վրայ յոյ-
նութեան նշան . . .

— Լահ , լահ , ինչո՞ւ ես տաքանում ,
կարմրեց Թումասը . թէ դուն լաւ Յոյն ես ,
ինչո՞ւ ես սրճատունդ բաց արել :

— Կարծում ես թէ ես ինձ չե՞մ մե-
ղադրում , գնչեց տաքութեամբ Միխա-
յէլը և առջեւ կապած գոգնոցով կրակը
արծարծեց . բայց ի՞նչ արած . Թուրքը
ի՞նչ գիտէ քրիստոնեայի տօնը . . . անց-
եալ շաբաթ . օրը իմ տօնս էր , խօ յիշում
ես . կարելի է այդ էլ ես մոռացել որտե՛-
հետեւ չեկար չնորհաւորելու :
— Քոյրս մինակ էր . . . կմիմաց Թո-
ւմասը :

— Հա՛, իրաւ, ասաց Միխայէլը . Ելէ-
նան ի՞նչպէս է, խեղճը էլի մո՞ւնջ է...
Աստուած պահի նրան . արդէն պահում
էլէ, Աստուած այդպիսիների պահապանն
է... էլի այնպէս աիրո՞ւն է :

— Սյա՛, ... բայց դու խօսքդ մոռա-
ցար :

— Հա՛, էն էի ասում . . . բայց ինչո՞ւ
ես կանգնել դռան մօտ ներս ե'կ, հիմա
ջուրը կը տաքանայ, մի սուրճ էլ կը խմես :
— Ձեմ ուզում, գէմքը ծռմռկեց թո-
մասը . սուրճը թօւրքի խմելիք է, խոհ մի
Յոյն թուրքի խմածը չը պիտի խմի, մի
ճշմարի՛տ Յոյն . . .

— Իրաւունք ունես . . . բայց այդ թող-
նենք . էն էի ասում . . . անցեալ շաբաթ-
օր իմ տօնս էր. լա՛ւ, ես ի հարկէ խա-
նութս չեմ բաց անում և նպտում առուն
եկողներին եմ ընդունում . . . մէկ էլ ի՞նչ
լինի որ քէֆդ գայ . . . յանկարծ կադին
իր ծառայներով կանգնեց դռանս մօտ և
հրամայեց ինձ դուրս գալ. երբ ես դուրս
եկայ և հիւրերս լեղապատառ եղած լը-
ռութեամբ միւս դռնից ու պատերից
փախան, կադին խատութեամբ նայեց ինձ
և գոչեց .

« — Գեաւո՛ւր, ինչո՞ւ այսօր դու-
քանդ չես բաց արել :

« — Էֆէնդը՝, կմկմացի ես. այսօր . . .
այսօր իմ անուանս տօնն է . . . կադին
քերանը չի բաց անի ու մի կուշտ ծիծաղի :

« — Խընզը՝, գոռաց . քանի՞ փարայ
կառնեմ մի գեաւուր շան տօնը. հայտէ,
գնա դուքանը բաց, հաւատացեալ իս-
լամները այսօր զրկուել են՝ սուրճից :

« — Բայց . . . կմկմացի ես աշխատե-
լով գէմ գնել. «բայց» իս փոխարէն՝ կա-
դին մի լաւ հայհոյեց ինձ, յետոյ հրա-
մայեց իր ծառայներին, որոնք ինձ քաշ
տալով տարան մինչեւ խանութս և այն-
չափ վզակոթս տաքացրին որ սոխուե-
ցի խանութը բանալ. . . է՛ ապա, թոմա՛ն,
սրա՞ն ինչ կասես :

— Կասեմ որ, պատասխանեց թոմասը
սառնութեամբ, կադին իրաւունք է
ունեցել քեզ «շուն» անուանելու . . .

— Ի՞նչ, ի՞նչ, գոչեց սրճագործը այ-
լագունած :

— Այո՛, շարունակեց թոմասը. մի մարդ
այդպէս չէր անել, նա մանաւանդ երբ
այդ մարդը Յոյն լինէր. նա կը հանէր
գանակը և կը ցցէր կադիի կրծքում. . .

— Ասում ես էլի՛... , ասաց սրճագործը . ամենքը խօ քեզ նման յանդուգն չեն ու անվախ : . . . :

— Հըմ, կնճռեց դէմքը թոմասը . հէնց այդ է ցաւը է՛ է՛ . . . :

Եւ վեր կացաւ գնալու :

— Գնում ես , թոմա՛ս , ասաց Միխայէլը . կուզես ձուկը թողինձ մօտ . եթէ թուրքերից առնող կը լինի , կը ծախեմ :

— Ոչ , ասաց թոմասը , չէմքի վրայ կանգ առնելով . տօն օրին չէ կարելի առեւտուր անել . դրա փոխարէն տոպրակը թող մնայ այստեղ . եթէ մինչեւ վաղը ձիները շը հոսեցին , կը ծախենք է գուց :

— Լա՛ւ , լա՛ւ , կը դնեմ մառանը . . . սառն է այնտեղ :

— Շնորհակալ եմ :

Թոմասը գուրս գնաց :

— Էյ , թոմա՛ս , բացագանչեց նրա ետեւից Միխայէլը . այսօր քրոջդ հետ չե՞ս գալ հրապարակը . նուագածութիւն , պար , խաղեր կը լինեն . . . Ստավրաքին մյօսօր գօտեմարտելու է :

— Իրա՛ւ , հարցըց թոմասը կանգ առնելով :

— Այո՛ , այո՛ , մեծ բազմութիւն կը

մինի , . . . շատերս սպասում ենք որ դու էլ կը մասնակցես խաղերին :

— Տեսնե՛նք , ասաց թոմասը և հեռացաւ :

Նա մի պտոյտ գործեց քաղաքում . փողոցները սկսում էին լցուել բազմութեամբ , գլխաւոր հրապարակի վրայ մի քանի մարդիկ մաքրում էին գետինը , իսկ բազմութիւնը հետզհետէ լցվում էր այդտեղ . Թոմասը մի քանիսի հետ խօսեց , յետոյ մտածելով թէ քոյրն էլ կուզէր ներկայ գտնուիլ այդ հանդէսներին , ըշտափեց տուն՝ նրան էլ բերելու :

Նա նորից անցաւ սրճատան առջեւից , յետոյ մտաւ իրենց փողոցը և ընդունելով անցորդների «բարի լյոյր» , մտեցաւ իր խրճիթին : Հեռուից նա փնտուեց աչքերով էլէնային որ սովորութիւն ունէր միշտ իւր եղածը սպասել դռան վրայ և դիմաւորել նրան :

Երեւի մտել ներս դուռը փակելէ , մտածեց նա և մտեցաւ :

Քայց խրճիթի դուռը բաց էր . ո՛չ միայն բաց էր , այլ եւ կարծես քանդուած էր . Աղլած կանգ առաւ , միրտը սեղմուեց , զգաց որ մի վատ բան էր պատահել :

— Ելէնա՛, գոչեց նա դողդ ոթուն ձայ-
նով :

— Ի՞նչ յիմարն եմ, մոտածեց իսկոյն.
միթէ՞ քոյրս լուռմէ :

Ներս մոտաւ . բայց մոնելուն պէս քա-
րացած կանգ առաւ և պատին կարաւ,
ցած չընկնելու համար :

Խրճիթի մէջ ամեն բան տակն ու վրայ
էր. մահիճը քանդուած, աթոռները ջարդ
ու փշուր խառնուած պղնձեղէնների և
կոտրտուած ամանների հետ. մէջտեղուժ
տեսնվում էր արեան մի փօքրի՛ լճակ որ
տարած վրւմ էր մինչեւ դուրս. շորերը
գզգզուած, իր թոռը ընկած ցցից և, ի
լուռմն ամենայնի, գետնի վրայ ընկած
գտաւ նա քրոջը տուած իր դաշոյնը . . . :

Ելէնան չը կար :

Պահ մը կարծեց թէ խենթանում էր.
ձեռները մազերի մէջ կոխեց և աղաղա-
կեց աղփաղով ձայնով.

— Ելէնա՛ . . . :

Յետոյ դուրս վազեց, մի քանի կա-
տաղի թռիչներով խրճիթների առջեւից
անցաւ, նորէն վերադարձաւ, ծովափը
վազեց և վիշաքաղեցնող ձայներով, ոռ-
նալու պէս գոռում էր .

— Ելէնա՛, Ելէնա՛ . . . : Այժմ ոչ
պահ մի մոտածեց : Այդ միջոցին նրա միտ-
քըն ընկաւ որ կարող էր Ելէնան դրացի-
ների տունը գնացած լինել :

Սրացաւ դէպի խրճիթները և կատա-
զութեամբ ներս ընկաւ . ոչ ոք չէր տե-
սել Ելէնային :

— Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, հարցնում էին
բոլոր հետեւելով նրան :

— Ելէնա՛ . . . աղաղակում էր Թոմասը
գժի պէս, վազում էր ամեն կողմ, պը-
տոյա էր գործում խրճիթի չորս կողմը .
նրա աչքերը մեծացել, ձայնը խռպոտել,
դիւահարի էր նմանում . . . :

Անցողները կանգ առին, խրճիթներից
բոլոր դուրս թափուեցին և ամեն ոք
յուզուած դիտում էր այդ տեսարանը :

Թոմասը վազում էր մէկից միւսի մօտ,
բռնում թեւերից, ուժգնութեամբ թա-
փահարում էր նրանց և հարցնում :

— Ասացէ՛ք, Ելէնային չը տեսա՞ք :

— Աւա՛զ, չը տեսանք, ստատախո-
նում էին նրան տիրութեամբ :

Թոմասը յուսահատած ներս մտաւ
խրճիթը : Ներս մոնելուն պէս, նրա աչ-

Քը ընկաւ մի կըսր սպիտակ բանի որ կանդ
էր առել մահճակալի մի ոտի մօտ :

Աչքերը փայլեցին , ցատկեց գէպի նա
և ձեռքն առաւ մի թրքական փաթոթի,
մի ապարօշ :

Ցետոյ դողաց , ատամները կրծտեց և
մտածեց :

— Կադիի չալմա՞ն է . . . , գոռացին
ներս մտնոլ դրացիները :

Յանկարծ Թոմասը լրջացաւ , այլ եւս
չին դողում նրա ձեռքերը և ոչ իսկ
այնպէս վախ ազդում նրա ակնարկը :

Դրանց փոխարէն նա այժմ մեռելային
գունատութիւն ստացաւ :

— Ա՛ , ասաց նա . կադիի՞նն է . . . և կա-
դին բարեհածել է քոյրտանե՞լ . . . տես-
նե՞ք . . . :

Ասաց , ապարօշը առաւ ձեռքը ու
դուրս թռնելով խրճիթից սկսեց վազել
գէպի քաղաք :

Ամենքը վազն ի վազ հետեւեցին նրան :

Գ

Այդ պատահում էր Թոմասի մօր մեռ-
նելուց ուղիղ մի տարի յետոյ : Բաղաքի

մեծ հրապարակը լիքն էր բազմութիւնով .
արդէն խաղերը և պարերը սկսել էին .
Մի կողմում յոյն երիտասարդների մի
խումբ շրջապատել էր նուագածուներին ,
մի կըսր պար էր բռնել . մի ուրիշ կողմ
երկրորդ խռմիք երգելով « առնաւու-
այի (1) պէս կաքաւում էին . մի ուրիշ
խումբ « Ելէնիքա » էր երգում . իսկ հրա-
պարակի մէջ տեղում երկաւ գօտեմարա-
ներ կիսամերկ միմեանց էին կպել :

Յոյն կիներ , տղայներ , ծերեր կանդ-
նել գիտում էին . ամբողջ քաղաքը այդ-
տեղ էր . այդտեղ էին նաևս հեռու խըմ-
բըված Թուրքերը որոնք լրբութեամբ
սպրդում էին ամեն իմրի մէջ , ծաղրում ,
հայհոյում էին , մի կնոջ նայելով համար-
ձակօրէն խօսքեր էին ձգում և երգող-
ների առջեւից անցած ժամանակ բերան-
ները ծռմռելով ու այլանդակ ձայներ
հանելով , ծաղրում էին յունական աղ-
գային երգը :

Յոյները գունաթափվում էին . կային
ոմանք էլ որ կամենում էին ջարդ ու փը-
շուր անել ծաղրող Թուրքերի ասամերը .

(1) Ալբանիացի :

բայց զսպում էին իրենց և շարունակում
էին երգել, միայն այս անդամ դառն,
բեկրեկ և տխուր ձայնով...:

Յանկարծ լսուեց մի աղաղակ. ալարող-
ները կանգ առին, երգողները լսեցին,
գոտեմարտները զատուեցին և ամբոխը
ճանապարհ բաց արեց մի խմբի որի առ-
ջեւից վազում էր Թոմասը մազերը ցըր-
ւած, դէմքը գունաթափ և ապարօշը օ-
դի մէջ երերցնելով:

Նա վազեց հրապարակի մէջտեղը, կանգ
առաւ և երբ բոլորը միմեանց հրելով
շրջապատեցին նրան, շարժեց ձեռքը ու
գոռաց.

— Յոյնե՛ր, էլէնիքայի զաւակնե՛ր, լս-
եցիք թէ Թոմաս Բոցարիսը ի՞նչ կըպատ-
մէ ձեզ...: Մի աարի առաջ Թուրքերը
խլեցին մեռնող մօրս տակից նրա մահի-
նը, դատարկեցին խրճիթը և չը խզա-
ցին մեռնողին իսկ. իսկ այսօր նրանց
մեծը, կադին, որի ապարօշը ընկած գը-
տայ մեր խրճիթում, յափշտակեց իմ քը-
րոջ, էլէնային, որին բոլորդ ճանաչում
էք... այդ միեւնոյն է թէ Թուրքը ան-
պատուեց, առեւանգեց ամբողջ էլէնի-
քային...: Յոյնե՛ր, Թուրքը խլեց մեր

հացը, մեր աղատութիւնը, շան պէս ըս-
տիպեց լզել իւր ոտը, պղծեց մեր տա-
ճարները և այսօր խլում է մեր աղջիկ-
ները, յայտնի համարձակ տանում է նա
մեր կանանց... Էլ ի՞նչ մնաց մեզ, Յոյ-
նե՛ր, եթէ ոչ ծովը թափւել և սատակել
շան պէս քան կրել այս գլխարկը, նստել
այս հողի վրայ...:

Բոլորը շարժեցին, մի խուլ մոռմոռոց
տարածվեց ամեն կողմ. էլէնային կադին
յափշտակել է, կայծակի արագութեամբ
ասացին միմեանց բոլորը. կարծես իրենց
քոյրերը կամ կանայքն էին յափշտակւել:

— Այո՛, շարունակեց Թոմասը խորին
լսութեան մէջ. Էլ ոչինչ չը մնաց մեզ,
սոսրացանք մինչեւ գետին, լզեցինք նը-
րանց ոտները և եթէ թոյլ տանք աղա-
տօրէն տիրանալու մեր կանանց, ոչնչով
պկաս չենք լինել կաւատներից... իսկ
Յոյն և կաւատութիւնն... թող ոչնչանաց
Յոյնի անունը այլ եւս և թող երկինքի
հուրը մոխիր գարձնէ մեզ բոլորիս, քանի
որ մենք լուս կը մնանք և դեռ եւս կը
շարունակենք մի բուռ կատաղիների ճան-
կերի մէջ թփոտալ...:

Յանկարծ հեռուելց երեւեց մի ծիաւոր

որի կողքից հետեւակ գնում էին շատ
զինուած անձեր :

Զիաւորը տեսաւ որ ամբոխը լուռ է
և մի ինչ որ մարդ խօսում է յունարէն :

— Ի՞նչ է այն, գոչեց նա ձին քշելով
դէպի հեռուն կանգնած Տաճիկները :

— Զենք հասկանում, ասաց մէկը. ե-
ռեւի մի բան է եղել :

Զիաւորը ձին քշեց դէպի ամբոխը :

— Կադի՞ն, կադի՞ն... գոչեցին Յոյ-
ները ես քաշուելով :

Այդ ձայնը լսեց Թոմասը. նա լսեց,
շած ձգեց ձեռքից ապարօշը և ձեռքը
տարաւ հագուստի տակը :

Կադին ձին քշեց դէպի նա, ամբոխը
ձանապարհ բաց արեց. Թոմասը ձեռքը
հագուստի տակ, ըրթները պրկած, բոր-
բոքուած աչքերով սպասում էր :

— Ի՞նչ է այն, գեաւուր, գոչեց կա-
դին, մարակը բարձրացնելով Թոմասի
վրայ. ինչո՞ւ ես հաւաքել գլխիդ ամբոխը:
Թոմասը շարժւեց, մի ոստիւնով բըռ-
նեց կադիի ձիու սանձը և ասաց դոդ-
դոջուն ձայնով.

— Դո՞ւ յափշտակեցիր քրոջս :
Կադին գունաթափւեց և ձիու սանձը
քաշեց :

— Յոյնե՛ր դարձաւ Թոմասը ամբո-
խին. այս է նա որ ձեռք դրեց մեր կա-
նանց վրայ. Ժամանակը հասել է որ այլ
եւս մեր վրէժը առնենք... կեցցէ՛ Յու-
նաստան, հետեւեցէ՛ք ինձ :

Եւ ցատկելով, կայծակի արագու-
թեամբ դաշոյնը խրեց կադիի կուրծքին
մէջ, յետոյ բռնեց դէպի ետ ընկնող Թուր-
քի երկար հագուստից, քաշեց նրան ցած-
ձիուց, մի երկրորդ արագ հարուածով
պատուց նրա կոկորդը, արիւնոտ դա-
շոյնը բարձրացրեց և գոռաց .

— Կեցցէ՛ Յունաստան... վրէ՛ժ, Յոյ-
նե՛ր, վրէ՛ժ :

Կադիի ծառայները սուրերով վրայ
թափւեցին. յանկարծ շարժւեց ամբոխը,
լսուեց մի աղաղակ և դրան հետեւեց
« կեցցէ՛ Յունաստան » ձայնը և ամբոխն
ու թիւրքերը խառնուեցին միմեանց.
փայտեր, կռուփիներ և սրեր էին որ տե-
ղում էին միմեանց վրայ. դիակներ փըռ-
փում ոտքերի տակ, ճիշ, աղմուկ, « վրէ՛ժ »
աղաղակներ լսվում էին ամեն կողմից,
թռնում էին գլուխներ, հնձվում մար-
դիկ և Յոյները կատաղութեամբ պնդում
էին փախչող Տաճիկների ետեւից... :

Թումաս Բոցարիսը իւր գաշոյնը ձեռ-
քին՝ գլորեց մի քանի Թուրքի և երբ հը-
րապարակի վրայ գիտակներից բացի , այլ
եւս Թիւրք չէր մնացել , նա բարձրացաւ
մի քարի վրայ , ցնցեց իւր երկար մազե-
րով արիւնուո գլուխը ու շորերը , երեր-
ցրեց գաշոյնը և ասաց .

— Ցոյնե՛ր , դէպի կադիի տունը՝ ջըն-
ջենք անօրէնին մեր կղզիից . . . :

— Դէպի կադիի տունը՝ աղաղակեց
ամբոխը :

Այս անգամ ամեն ոք շտապեց կորզել
իր խրճիթից առաջին հանդիպած երկա-
թեայ գործիքը և բոլորը « Կեցցէ՛ մեր
հայրենիք » աղաղակներով դիմեցին դէպի
պալատը . . . :

Քիչ յետոյ Էլենան իւր եղբօրն էր
յանձնվում . Թուրքերը թողնելով իրենց
մեծ մասը մեռած , շտապեցին փախչել
կղզիից և թողնել նրան Ցոյներին :

Պէտք էր սակայն մի մարդ , որ կարո-
ղանար ապագայի համար զօրութիւն ստա-
րաստել , կառավարել կղզին , ոյժերը միշտ
միացած պահել և մինչեւ որ իրենց օգ-
նութիւն գար , կարողանար կղզին աղատ
պահել Արշակեղագոսի ծովի մէջ վիստա-
ցող թրքական նաւերից :

Պատանի Թումաս Բոցարիսը միաձայն
ընտրուեց կղզիի կառավարիչ :

Երբ Բոցարիսի քաջագործութեան լու-
րը իիւզանդիոն հասաւ , այնտեղի Յոյ-
ները շատ ուրախացան . սակայն կայսրը
և նախարարները զբաղուած լինելով աւելի
ծանր հոգսերով , չուզեցին այդ գործերը
թողնել և մտածել մի փոքրիկ կղզիի մասին :

Այսու ամենայնիւ Բոցարիսը ամրա-
ցրեց կղզին , մի փոքրիկ զօրագունդ կազ-
մեց և Թիւրքերի հետ երկար կոփւներ
մղելուց յետոյ , կարողացաւ կղզին աղատ
պահել նրանց լուծից . նա մինչեւ իսկ մի
քանի փառաւոր ջարդեր տուաւ Թուր-
քերից ուղարկուած մեծ գնդերին :

Սուլթանը զբաղուել էր իիւզանդիոնով ,
ուստի և Բոցարիսի կղզին մի առժամա-
նակ վայելեց աղատութիւն :

Եւ այդ աղատութիւն նա վայելեց եր-
կար ժամանակ անվրդով և խաղաղ մինչ
կենդանի էր Թումաս Բոցարիսը . . . :

Հատ տարիներ անցան . Թումաս Բոցա-
րիսը օրինակելի բարի , արդար և ազնիւ
կառավարիչ էր . բայց դաւաճանութիւնը
նրան էլ կարողացաւ ոչնչացնել :

Մի օր, մի դաւաճան, սափորով լիքը
պինի տուեց էլքնային՝ իբր ընծայ Բոցա-
րիսի համար բերած։

Դինիին մէջ թոյն կար և Բոցարիսը ա-
ռանց գիտենալու խմեց, Այդպէս մեռաւ
Բոցարիսը. ժողովուրդը մեծ սուդ արեց
նրա վրայ. Խակ էլքնան գրկեց նրան ձած-
կող հողը և լուռ ու մունչ մեռաւ այն-
տեղ։

Բոցարիս մեռնելով, կղզին կորցրեց
իւր ազատութիւնը. Թիւրքերը իմացան
ահարկու պատանիի մահը և ասպատակ-
ներ ու գունդեր ուղարկեցին դէպի կը լ-
զին. Բոցարիսը շը կար որ միացնէր ժո-
ղովրդին, խրախուսէր և մզէր թշնամուն։
Կղզին նորից ընկաւ Թիւրքերի ձեռ-
քը. չուտով թիւրզանդիսներից և այ-
նուհետեւ երկար ժամանակ Յունաստա-
նը տառապանք կրեց, հեծեց, մզկտաց
մինչեւ որ վերջապէս նորից արծարծուեց
սուրբ կրակը, նորից մեծացաւ նա, մի
ուժգին հոսանքով լավեց թշնամուն, թո-
թափեց շղթան և այսօր նա բարձրագը-
լում վայելումէ մի փառաւոր ազատու-
թիւն...։

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է
ստանալ Արմենիաի խմբագրատունէն,
իրենց առջեւ նշանակուած գիներով
և փոստի ծախքը խմբագրատունէն
վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք
չդրկուիր։

ՀՐԱՏԱՐԱԿԱԹԻՔԻՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
Ը

ԹԻՒՐՔԻԱԻ ՀԱՅԵՐՆ

ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ

ԳՐԵՑ Մ. Ա.

Թիւրքիաի Հայերին և իրենց գը-
րացի Թիւրքերի, Թիւրգերի, Զէր-
քէզների, Ասորիների, Եղիտիների,
Գըղլպաշների և այլ աղգերի վրայ
վիճակագրական և ցեղաբանական ամ-
փոփ և հետաքրքրական տեղեկու-
թիւններ տրուած են այս տետրակի
մէջ. Թիւրքահայաստանի մէջ բնակող
այլ և այլ աղգէ բնակիչների ժուին
մէկ բաղդատական ցուցակը կցուած
է տետրակին վերջը։ Դինն է 50 սան-
թիմ (35 սանթիմ)։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
թ.

«ԱՐՄԵՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ
Ա. ՏԱՐԵԿԱՆ
(1885-86)

Կատեր կը փափաքէին ունենալ
Սրմէնիաի Ա. տարեշրջանի թիւերը. բայց
որովհետեւ այդ թիւեր բոլորովին ըս-
պառած են, նոյն տարեշրջանի մէջ Մ.
Փորթուգալեանի գրած առաջնորդող
յօդուածներէն ՅՈՒ չափ ամիսոփուած
են այս Յուշարարի մէջ, մի քանի թրդ-
թակցութիւններով մէկտեղ որոց մա-
սին խօսուած է առաջնորդող յօդ-
ուածներին մէջ: Այդ յօդուածների մէջ
կան «Ծնտեսական հարցեր» (Վանի տըն-
տեսական վիճակը), «Թիւրքիան չուզեր
լսել», «Ի՞նչ պէտք է անել և ի՞նչ
կրնանք անել» (Մայրակեղութիւն), «Եւ-
րոպարնակ Հայերն և Կ. Պօլսի Պատ-
րիարքարանը», «Պէտք է գծել մեր
ծրագիր», «Մեր ոյժեր համախմբելու
մի առաջարկ», «Ինչո՞ւ չեն յաջողիք
մեր գործեր», «Միալ մտածութեր»

(Վանի Պօլս եպիսկոպոսի քարոզը որ
խօսած է Վանի Արարք քաղի կեղեցւան
մէջ 1885 մարտ 31ին), «հգական սեռի
մասնակցութիւնը հայրենասուրական
գործին», «Հայ ժողովրդի և թիւրք
զօրքերի կուրը վանի մէջ» (Նամակ
վանեն) և այլն և այլն:

«Արմենիա»ի Յուշարարը իր Յառա-
ջարանով մէկտեղ կը բազկանայ 124 ե-
րեսներէ, ութածալ գիրքի վրայ
տպագրուած: Գինն է 1 ֆր. և 40 սնթմ.
(1 ֆրանք:)

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

Կ. ՊՕԼՍՈՅ ՀԱՅՈՅ ԿԵՆՔԵՆ ԱԲՆՈՒԱՆ
ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԵՊ)
ԳՐԵՅ ԱՊԼԱՍՏԻՎ

Այս հետաքրքրացարժ գրուած կը
ներկայացունէ ընտանելան տխուր
պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ
սնիրարոյական մի հայր իւր տպական-
ուած վարքուրարքով որչա՞փ չարիք-
ների պատճառ գարձած է և վերջ է
վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով
սպաննուած և անհետացած է աշ-
խարհէ: Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ):

Վ Ր Ե Ժ

Թարգմանեց ուսումնականից

Ա. Ս.

Ինչ որ այսօր թիւրքերն կանեն
Հայաստանի մէջ և անել կուտան Քիւր-
դերին, նոյնը և աւելին կանէին նաև
Պուլկարիաի մէջ մինչև ու Պուլկարներն
ազատուեցան արդ բարբարոսների լու-
ծէն և ունեցան իրենց ազգային կա-
ռավարութիւն։ Թրքական բռնարա-
րութիւնների մէկ փոքրիկ պատկերը
կը ներկայացունէ Վրէժը որ ցոյց կու-
տայ նաև թէ Պուլկարներն այն աս-
տիճան նեղուած էին քաղաքների և
գիւղերի մէջ որ յանձն կառնէին մինչև
իսկ լեռներն քաշուելով ապրիլ և յար-
մար առիթն ներկայացած ժամանակ
իրենց վրէժ լուծել թիւրքերէն։

Վրէժի գինն է 20 սնթմ. (15 սնթմ.)։

Հ. Ղ. Ալիշան — Պատկերազարդ Աշ-
խարհազրութիւն Նոր Հայաստանի (Բաղ-
մահմուտ Հ. Ալիշանի աշխատասիրու-
թեամբն հրատարակուած այս աշ-
խարհագրութիւն որ մեծագիր և եր-
կիցնան 405 երեսներէ բազկացուծ է
և գիւրահասկանալի պարը իրաբար
լեզուով գրուած զարդարուած է
Յօհի չափ պատկերներով մինչ կը
գտնուին Վան քաղաքի, Վանի բեր-
դի, Պայազիտի, Էջմիածնի, Անիի
զանազան նշանաւոր աւերակների ևն.
պատկերներն։ Դրքին վերջը կը գըտ-
նուի բուն Հայաստանի, այսինքն Մեծ
Հայքի, բոլոր քաղաքների, բերդե-
րի, գիւղերի, լեռների, գետերի մի
ընդարձակ ցանկը ուր իւրաքանչիւրին
առջեւ նշանակուած է թէ գրքին
քանիերոդ տանը մէջ գրուած է ա-
նոր վրա)։ Դին 5 ֆր. և 50 սնթմ.։

Հ. Ղ. Ալիշան — Նշանակ եւ նշանարք
Հայաստանի Ա., Բ. և Գ. պրակներ (Հա-

յաստանի հետաքրքրական տեղերէն
և քաղաքներէն 36 ին լուսանկար
պատկերները զետեղուած են նշմարքի
3 պրակներին մէջ, անոնցմէ իւրա-
քանչիւրին վրայ պատմական և աշ-
խարհագրական հմտալից տեղեկու-
թիւններով, աշխարհաբար լեզուով
գրուած Վեր. Հ. Ղ. Ալիշանէն)։ 3
պրակներն միասին 26 ֆր. և 50 սնթմ.

ՐԱՅՖԻ, ԴԱՒԻԹ ԲԵԿ պատմական
վէպ(1722-1728) Ա, Բ և Գ դիրքերն վեր-
ջաբանով մէկտեղ մէկ հատորի մէջ ամ-
փոփուած. Բ տիպ։ 10 ֆր.։

ՐԱՅՖԻ, ԽԵՆԹԼ (Արկածներ վերջին
ռուս-թուրքական պատերազմից) և
ԶԱԼԱԼԵՑՑԻՆ (Մի պատկեր նրա ար-
շաւանքից)։ Երկուքը մէկտեղ մէկ հա-
տորի մէջ ամփոփուած. Բ տիպ։ 8 ֆր. 75 ս։

ՐԱՅՖԻ, ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻ-
ՏՈՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ 5 ֆր. 25 սնթմ.։

ՐԱՅՖԻ, ԿԱՅԾԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆ. 75 ս։
ԵԵՐԵՆՑ, ԹԷՌՈՒՐՈՒՍ ՌԵՇՈՒՆԻ

3 ֆրանք 50 սանթիմ.։

ՀՀ Ազգային գրադարան



NL0343297

